հայցվորի վրա, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման (...) հարցերը:

«Պետական տուրքի» մասին օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ:

«Պետական տուրքի» մասին օրենքի 9-րդ հոդվածի 9.4-րդ կետի համաձայն՝ Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի
50-ապատիկի չափով:

Նույն հոդվածի 9.5-րդ կետի համաձայն՝ գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝ պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 30-ապատիկի չափով.

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև պետական տուրքի գումարը, որը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով: Նման հաշվարկի հիման վրա է որոշվում օրենքով սահմանված և պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի չափը:

Տվյալ պարագայում Հայցվորի կողմից նախապես վճարվել է 80,000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

(IV) Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 109-րդ, 179-րդ, 182-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով՝

ՎՃՌԵՑ

1. Թիվ ԵԴ2/1184/02/26 քաղաքացիական գործի վարույթը.

1.1 Ըստ հայցի «ԳԼՈԲԶՈՆ ԷՆԹԵՐՓՐԱՅՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրոդ անձ «ԷՆԿԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ Մարտունիի համայնքապետարանի համայնքի ղեկավարի կողմից՝ «ԳԼՈԲԶՈՆ ԷՆԹԵՐՓՐԱՅՍԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 14.01.2026թ.-ին կայացված թիվ 27-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճել՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի

հիմքով:

1.2. Ըստ հայցի «ԳԼՈԲԶՈՆ ԷՆԹԵՐՓՐԱՅՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրոդ անձ «ԷՆԿԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ Մարտունու համայնքապետարանի կողմից և «ԳԼՈԲԶՈՆ ԷՆԹԵՐՓՐԱՅՍԻՍ» ՍՊ, «ԷՆԿԻ» ընկերությունների միջև 30.06.2025 թվականին կնքված թիվ «ԳՄՄՀ-ՀԲՄԱԾՁԲ-25/09-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, իսկ կարճման մասով հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE47-EF68-490B-8845 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am